ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թվականներին. *Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002, 272 էջ, 58 լուսանկար:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակված վերոհիշյալ մենագրության մեջ պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը վեր է հանել Հայաստանի Առաջին և Երկրորդ հանրապետություններ-ի բանակների ու վերջիններիս վերակազմավորման հետևանքով ստեղծված Հայկական հրաձգային դիվիզիայի ժառանգական կապը, բացահայտել խաղաղ շինարարության տարիներին այդ զորամիավորման ունեցած տեղը Խորհրդային Հայաստանի կյանքում, ցույց տվել Հայկական բանակի և դիվիզիայի զինվորական կադրերի դերը Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայկական նոր ազգային զորամիավորումների կազմավորման գործում, նորովի լուսաբանել այդ դիվիզիաների պատմությունը, նրանց անցած մարտական ուղիներն ու ճակատագրերը: Հեղինակն այդ կարևոր հիմնահարցերի լուսաբանումը հիմնականում կատարել է Մոսկվայի, Պողոլսկի և Երևանի ռազմական, պետական ու կուսակցական արխիվներում պահվող փաստաթղթերի ու նյութերի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա, որոնց զգալի մասը հայ պատմագրության մեջ շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Աշխատության մեջ օգտագործվել են նաև գիտական և հուշագրական գրականություն, փաստաթղթերի ժողովածուներ, տվյալ ժամանակաշրջանի թերթեր ու հանդեսներ: Աղբյուրագիտական բոլոր սկզբնաղբյուրների նկատմամբ հեղինակը ցուցաբերել է քննական մոտեցում, համեմատել և վերլուծել բազմաթիվ իրարամերժ փաստեր, կատարել անհրաժեշտ ճշտումներ, մոռացությունից փրկել Հայկական բանակի և զորամիավորումների պատմությանը վերաբերող կարևոր տվյալներ, զինվորական գործիչների անուններ:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և եզրափակումից: Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, հրատապությունը, գիտական նորույթը, որոշված ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Խոսելով մենագրության գործնական նշանակության մասին, հեղինակը ցույց է տվել, որ Հայաստանի Առաջին և Երկրորդ հանրապետությունների զորամիավորումների պատմության բազմակողմանի հետազոտությունը մեծ չափով նպաստելու է Հայաստանի Երրորդ Հանրապետության բանակի անձնակազմի մարտական ուսուցման և պատրաստականության, հայ զինվորների ու սպաների, ընդհանրապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործին, զգալի չափով ամրապնդելու է բանակի և ժողովրդի միջև կապերը:

Առաջին գլխում, որը կրում է «Հայկական բանակը 1918–1920 թվականներին» վերնագիրը, հեղինակը լուսաբանել է Հայկական բանակի կազմավորման, նրա կառուցվածքի, թվաքանակի, սպառազինության և համալրման, կառավարման, աստիճանաբաշխման, անձնակազմի վարժատրման և ուսուցման, գնդային քահանաների համակարգին վերաբերող հիմնահարցեր և այլն: Հանգամանորեն քննարկելով վերոհիշյալ հիմնահարցերը, գլխի առաջին բաժնում ցույց է տրվել, որ 1918թ. մայիսի վերջերին Հայաստանում պետականության վերականգնման և մինչ այդ ռուսական բանակի կազմում գոյություն ունեցած Հայկական առանձին բանակային կորպուսի վերակազմավորման հետևանքով սկզբում ստեղծվել է մեկ դիվիզիա (որը բխում էր նաև 1918թ. հունիսի 4-ին Բաթումում Հայաստանի և Թուրքիայի միջև կնքված ստորագրագրիչ, պարտադրված դաշնագրից), իսկ Առաջին համաշխարհային պատերազմում

Թուրքիայի պարտությունից հետո (1918թ. հոկտեմբերի 30) ավելի մեծ զորամիավորում՝ բանակ: Հայկական բանակը տվյալ ժամանակի չափանիշներով բավականաչափ մարտունակ և լավ զինված ուժ էր, որի շարքերում 1918–1920թթ. հաշվվում էր 16000–40000 զինվոր ու սպա: Բանակը կազմված էր հիմնականում մարտական հարուստ փորձ և զինվորական պատշաճ կրթություն ունեցող ռուսական բանակի հայ գեներալներից, սպաներից ու ենթասպաներից, իսկ շարքային կազմը համալրվում էր զորակոչի մասին Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ընդունած օրենքի համաձայն: Հարուստ արխիվային փաստերի հիման վրա հեղինակը բարձր է գնահատել Հայկական բանակի կազմավորման և հաստատման գործում ռուսական բանակի գեներալներ Թովմաս Նազարբեկովի, Հովհաննես Հախվերդովի, Իվան Բաղրամովի, Մովսես Սիլիկովի, Պավել Մելիք-Շահնազարովի և այլոց կատարած աշխատանքը: Չնայած հանրապետության շրջափակման և միջազգային քաղաքական անբարենպաստ պայմաններին, հայ զինվորականները կարողացան ոչ միայն համապատասխան մակարդակի վրա պահել Հայկական բանակի անձնակազմի մարտական ուսուցման և պատրաստականության գործը, այլև արտաքին թշնամիների դեմ տանել մի շարք հաղթանակներ և Բաթումի գաշնագրով նախատեսված Հայաստանի շուրջ 12000 քառ. կմ տարածքը հասցնել ավելի քան 70000 քառ. կմ: Այնուհետև հեղինակը ցույց է տալիս, որ Հայկական բանակն ի վերջո ստիպված էր տեղի տալ քեմալական Թուրքիայի, Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի մի քանի անգամ գերակշիռ ուժերի առջև՝ չստանալով, այսպես կոչված, գաշնակից, խոշոր տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի զինված օգնությունը:

«Խորհրդային Հայաստանի բանակը 1920-1922 թվականներին» վերնագիրը կրող երկրորդ գլխի առաջին բաժնում քննարկվել են Հայկական կարմիր բանակի ստեղծման, կառուցվածքի և համալրման հետ կապված հարցեր: Նորահայտ, ապագաղտնիացված արխիվային փաստերի հիման վրա հեղինակը լուսաբանել է նաև հին բանակի գեներալների ու սպաների Բաքու և Ռյազան աքսորվելու հարցը, բացահայտել այդ նոզկալի ոճրի կազմակերպիչների (Գևորգ Աթաբեկյան, Ավիս Նուրիջանյան, Գևորգ Ալիխանյան, Ս. Մելիք-Օսիպով) և նրանց հակառակորդների (Սարգիս Կասյան, Ասքանազ Մռավյան, Ալեքսանդր Բեգզադյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, հետագայում նաև Հայաստան եկած Ալեքսանդր Մյասնիկյան) անուններն ու գործունեությունը, առաջ քաշել սկզբունքային նոր դրույթներ, որոնք պարզություն են մտցնում առ այսօր հայ պատմագրության մեջ գեռևս գիտական լուրջ հետազոտության կարոտ այս կնճռոտ հարցում: Հեղինակին հաջողվել է ոչ միայն ճշտել 1921թ. հունվարի 24-ին աքսորված գեներալների ու սպաների թիվը, անունները, այլև պարզել նրանց հետագա ճակատագիրը՝ աքսորից վերադառնալուց հետո: Այս բաժնում փորձ է արվել վերականգնել Երևանի բանտում 1921թ. փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը, առանց դատարանի որոշման, Գևորգ Աթաբեկյանի անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ գազանաբար սպանված շուրջ 50 կալանավորների ինքնությունը: Հեղինակին հաջողվել է արխիվային և այլ հավաստի աղբյուրների հիման վրա պարզել 13 կացնահարվածների անունները: Գլխի երկրորդ բաժնում նորովի է լուսաբանվել Հայկական կարմիր բանակի կողմից Լոռու «Զեզոք գոտին» վրաց մենշևիկներից ազատագրելու, Վրաստանի խորհրդայնացման և Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվներին բանակի զորամասերի մասնակցության հիմնահարցը, ինչպես նաև Զանգեզուրում Նժդեհի հայրենանվեր գործունեությունը, որի շնորհիվ երկրամասը մնաց Հայաստանի կազմում և չարժանացավ Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի ճակատագրին: Երրորդ բաժնում հանգամանորեն քննարկվել է Հայաստանում քաղաքացիական կռիվների ավարտից հետո Հայկական կարմիր բանակի վերակազմավորման աշխատանքը, որի հետևանքով 1921թ. աշնանը ձևավորվեց Հայկական հավաքական բրիգադը, իսկ մեկ տարի անց՝ Հայկական հրաձգային դիվի-

զիան: Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատար նշանակվեց նախկին բանակի գնդապետ Անդրեյ Մելիք-Շահնազարովը, նրա տեղակալ՝ նախկին զինվորական նախարար, գեներալ-մայոր Խաչատուր Աբարատովը, դիվիզիայի շտաբի պետ՝ շտաբս-կապիտան Վլադիմիր Տամրուչին, գնդերի հրամանատարներ՝ գնդապետներ Ալեքսանդր Միրիմանյանը, Նիկոլայ Խուդոսբաշյանը, Հովսեփ Լազարյանը, հրետանային դիվիզիոնների հրամանատարներ՝ նախկին սպաներ Նիկոլայ Կլիչը, Վլադիմիր Սակիլարին, Գևորգ Զայլալոյանը, հեծյալ գնդերի հրամանատարներ՝ Հովհաննես Բաղրամյանը, Գևորգ Ցանարջյանը և շատ ուրիշներ: Հրամանատարական պաշտոններում նշանակված նախկին սպաների մի մասը վերադարձել էր աքսորից կամ թուրքական գերությունից:

Երրորդ գլխում, որը կրում է «Հայկական դիվիզիան խաղաղ շինարարության տարիներին (1922–1940 թթ.)» վերնագիրը, հեղինակը հանգամանորեն քննարկել է դիվիզիայի համար հրամանատարական-քաղաքական կադրերի պատրաստման և մարտական-քաղաքական ուսուցման կազմակերպման խնդիրները, համակողմանիորեն բացահայտել հայկական զինվորական կադրերի պատրաստման գործում Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան ռազմական դպրոցի կատարած գերը: Հատուկ ուշադրություն է դարձվել 1924–1925թթ. Կարմիր բանակում անցկացված ռազմական բարենորոգումների հարցի լուսաբանմանը, ցույց տրվել դրանց կիրառման ընթացքը Հայկական դիվիզիայում: Հեղինակն ըստ արժանվույն է գնահատել ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի, ռազմժողկոմ և ռազմական կոմիսար Հայկ Բժշկյանի, դիվիզիայի հրամանատար Անդրեյ Մելիք-Շահնազարովի, քաղբաժնի պետ Հայկ Հովսեփյանի, հեծյալ գնդի հրամանատար Հովհաննես Բաղրամյանի և շատ ուրիշների դերը դիվիզիայի մարտունակության բարձրացման գործում: Հեղինակը մանրակրկիտ քննարկել է նաև մարտական ու քաղաքական ուսուցման բնագավառում դիվիզիայի ձեռք բերած հաջողությունների աղբյուրներն ու պատճառները, բացահայտել այդ գործում կուսակցական-քաղաքական աշխատանքի և զինվորական մամուլի ներդրած ավանդը: Այնուհետև ցույց է տրվել, որ 1931թ. աշնանը Հայկական հրաձգային դիվիզիան վերակազմավորվեց լեռնահրաձգային միավորման, որի հրամանատարությունը ստանձնեց Հակոբ Աթոյանը (հին բանակի ենթասպա): Միավորման անձնակազմի մարտական ուսուցումը տարվում է լեռնային բարդ տեղանքում այն առավել չափով մոտեցնելով պատերազմական պայմաններին: Բնակլիմայական դժվարին պայմաններում անցկացված ամենամյա զորախաղերի ժամանակ դիվիզիայի անձնակազմը գերազանց մարտավարական ուսուցման և մարտական պատրաստության համար բազմիցս արժանանում է վերակաս հրամանատարության բարձր դնահատականներին ու շնորհակալությանը, 1935թ. դեկտեմբերի 2-ին ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության հրամանագրով կոչվում ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմ, Խորհրդային Միության առաջին 5 մարշալներից մեկի՝ Կ. Ե. Վորոշիլովի անունով, 1936թ. մայիսի 29-ին պարգևատրվում Կարմիր դրոշի շքանշանով, իսկ նույն թվի հուլիսի 17-ին ստանում է 76-րդ համարը: Գլխի վերջին բաժնում հեղինակը ընդհանուր գծերով բնութագրել է երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին աշխարհում ստեղծված միջազգային իրադրությունը, բացահայտել երկրի պաշտպանության ամրապնդման և Կարմիր բանակի ուժեղացման ուղղությամբ ԽՍՀՄ կառավարության ձեռնարկած միջոցառումները: Այս բաժնում հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել 1937–1938 թթ. տեղի ունեցած ստալինյան բռնաճնշումներին, որոնց զոհ գնացին բազմաթիվ անմեղ մարդիկ, այդ թվում շուրջ 40 հազար զինվորականներ, որոնց մեջ էին Խորհրդային Միության առաջին 5 մարշալներից 3-ը, 5 առաջին կարգի բանակային հրամանատարներից (հավասարազոր է բանակի գեներալի կոչմանը) 4-ը, 2 առաջին կարգի նավատորմի ֆլագմանից (հավասարազոր է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչման) 2-ը, 9-ը երկրորդ կարգի բանակային հրամանատարներից (հավասարազոր է

գեներալ-գնդապետի կոչման) 9-ը, 57 կոմկորներից (հավասարազոր է գեներալ-լեյտենանտի կոչման) 50-ը, 186 կոմդիվներից (հավասարազոր է գեներալ-մայորի կոչման) 154-ը և այլն: Բռնաճնշումներից զերծ չմնաց նաև հայկական դիվիզիան. գնդակահարվեցին դիվիզիայի 3 հրամանատարները (Անդրեյ Մելիք-Շահնազարով, Հակոբ Աթոյան, Սամվել Ասոյան), դիվիզիայի 5 զինվորական կոմիսարներից 4-ը, քաղբաժնի 4 պետերը և այլն: Բռնաճնշումների հետ մեկտեղ 1938թ. մարտի 7-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհն ու Համկ/բ/կ Կենտկոմը որոշում ընդունեցին Կարմիր բանակի ազգային զորամասերն ու զորամիավորումները համամիութենականի վերակազմելու մասին, որի հետևանքով միութենական հանրապետություններին սահմանադրությամբ արտոնված ազգային զորամասեր ունենալու իրավունքը անօրինական կերպով վերացվեց և ավելի սահմանափակեց այդ հանրապետությունների ինքնիշխանությունը:

Չորրորդ գլխում հիմնականում ԽՍՀՄ, ապա Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի նորահայտ նյութերի հիման վրա հեղինակը լուսաբանել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմավորված հայկական նոր դիվիզիաների համառոտ պատմությունը: Այդ գիվիզիաները ձևավորվեցին ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1941թ. նոյեմբերի 13-ի «Կարմիր բանակի կազմում ազգային նոր զորամասեր և զորամիավորումներ ստեղծելու մասին» որոշման հիման վրա: Տալով այդ որոշման դնահատականը, գրքի հեղինակն այն համարում է ժամանակին ընդունված խիստ կարևոր նշանակություն ունեցող ակտ, որը թելադրված էր կյանքի պահանջով և ելնում էր պատերազմական ծանր իրադրությունից բխող պայմաններից: Կենտրոնի համար ձեռնտու էր, որ Անդրկովկասի, Միջին Ասիայի հանրապետություններն ու Ղազախստանը տեղերում, իրենց նյութական և մարդկային միջոցների հաշվին համալրեին ու կազմավորեին նոր զորամիավորումներ, որտեղ կգերակշռեին տվյալ հանրապետության ժողովրդի ներկայացուցիչները և հետևությամբ նրանց ազգային լեզուներով կտարվեին մարտական ու քաղաքական ուսուցման աշխատանքները: Ազգային զորամիավորումների ու զորամասերի մասին վերոհիշյալ որոշումը օրենսդրորեն ամրապնդվեց 1944 թ. փետրվարի 1-ին, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին դումարման 10-րդ նստաշրջանն օրենք ընդունեց ազգային զորային կազմավորումների մասին: Համաձայն այդ օրենքի, յուրաքանչյուր միութենական հանրապետություն ուներ իր հանրապետական զորային կազմավորումը: Այնուհետև հեղինակը նշում է, որ Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում ազգային զորամիավորումների վերականգնումը Կարմիր բանակի համակարգում ունեցավ ռազմական և քաղաքական կարևոր նշանակություն: Նախ էլ ավելի ամրապնդվեց բանակը և կարճ ժամանակամիջոցում նրա շարքերի մեջ ներգրավվեցին մարտական նոր ուժեր, և հետո միութենական հանրապետությունների կառավարություններն իրավունք էին ստանում ոչ միայն սերտ կապեր հաստատել այդ միավորումների հետ, այլև հնարավորություն էր ստեղծվում տեղում ինքնուրույն և օպերատիվ կերպով լուծելու կարևոր շատ խնդիրներ, որոնք մեծ չափով նպաստելու էին ազգային զորամիավորումների արագ ձևավորման և նրանց մարտունակության ամրապնդման գործին: Նորահայտ արխիվային փաստերի հիման վրա գրքի այս բաժնում ցույց է տրված, որ պատերազմի առաջին շրջանում միայն Անդրկովկասում կազմավորվեց 17 ազգային զորամիավորում, այդ թվում հայկական 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ դիվիզիաները: Հեղինակը, միանգամայն ճիշտ, դրանց ավելացրել է նաև պատերազմի առաջին օրերին ՀԽՍՀ մարդկային և նյութական միջոցների հաշվին համալրված նախկին Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որի անձնակազմի 16 հազար հոգուց ավելի քան 14 հազարը հայեր էին: Առաջին անդամ հայ պատմագրության մեջ օգտագործելով ԽՍՀՄ, այնուհետև՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի՝ Կարմիր բանակի զորքերի կազմավորման ու հա-

մալրման գլխավոր վարչության 56-րդ, ինչպես նաև ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 644-րդ ֆոնդերի հատուկ պահպանության նյութերը, հեղինակն առանձին-առանձին լուսաբանել է հայկական բոլոր 6 դիվիզիաների կազմավորման աշխատանքները, յուրաքանչյուրի զինվածության, նյութական և մարդկային միջոցներով համալրվածության վերաբերյալ բերել արժեքավոր նոր փաստեր, վերլուծել դրանք, կազմել աղյուսակներ, որտեղ արտացոլված են բոլոր միավորումների ազգային կազմը, հաստիքով նախատեսված համալրվածության և սպառազինության իրավիճակը: Գլխի վերջին բաժնում հեղինակը լուսաբանել է հայկական դիվիզիաների անցած մարտական ուղիները, ցույց տվել պատերազմում տարած հաղթանակի գործում յուրաքանչյուր միավորման ներդրած ավանդը, բացահայտել դրանց ճակատագրերը, իսկ եզրափակման մեջ ընդհանրացրել ուսումնասիրության հիմնական արդյունքները:

Վերջում չենք կարող դրվատանքի խոսքեր չասել գրքում տեղ գտած 58 լուսանկարների առթիվ, որոնցից յուրաքանչյուրը պատմական կարևոր նշանակություն ունեցող սկզբնաղբյուր է հանդիսանում: Հեղինակը խնամքով հավաքել և ժամանակագրական կարգով տեղադրել է ինչպես Հայաստանի Առաջին Հանրապետության, այնպես էլ Խորհրդային Հայաստանի պետական, կուսակցական և զինվորական այն գործիչների լուսանկարները, որոնք կարևոր դեր են խաղացել Հայկական բանակի, նրա վերակազմավորման հետևանքով ստեղծված Հայկական կորմիր բանակի, ապա Հայկական հավաքական բրիգադի և Հայկական հրաձգային դիվիզիայի, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին կրկին ձևավորված նոր զորամիավորումների կազմավորման գործում: Գիրքը շարադրված է դրագետ լեզվով, ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ և նախատեսված է ինչպես ռազմական պատմության ուսումնասիրողների, այնպես էլ ընթերցող լայն շրջաններ համար: Այն կարող է օգտագործվել նաև որպես ուսումնական ձեռնարկ զինվորական ուսումնարաններում, դպրոցներում և բուհերում:

Այնուհանդերձ, աշխատությունը զերծ չէ մասնակի թերություններից, որոնք ավելի շատ կրում են տեխնիկական բնույթ: Ցանկալի կլիներ, որ գրքի վերջում տրվեին ռուսերեն և անգլերեն լեզուներով համառոտ ամփոփումներ: Սակայն վերոդրյալը չի կարող նսեմացնել հեղինակի երկու տասնյակ տարիների արդյունք հանդիսացող շնորհակալ աշխատանքը և անմիջապես կարող են վերացվել գրքի վերահրատարակման ժամանակ:

Ամփոփելով կարող ենք համարձակորեն նշել, որ գրախոսվող աշխատությունն ունի անվիճելի պատմագիտական արժեք և համոզված ենք, որ այն լայն ընդունելություն կգտնի ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս, նաև սփյուռքահայության շրջանում: Ավելացնենք նաև, որ գիրքը լույս է տեսել «Զանգակ–97» հրատարակչության տնօրեն Սոկրատ Մկրտչյանի հովանավորությամբ:

ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ